



# Frank D. Lanterman

## REGIONAL CENTER

<b>Վերնագիր՝</b>	Անկախ Ապրելու Հմտութեան Վարժեցում  (ILS) եւ Հոգատարութեան Յատկագումար
<b>Պաշտօնագիր՝</b>	Ծառայութեան Չափանիշ
<b>Վերաքննուած Թուական՝</b>	Վերամշակուած Վարիչ Խորհուրդի կողմէ Յունուար 1, 2017  Վաւերացուած Վարիչ Խորհուրդի կողմէ Մայիս 25, 2011  Վաւերացուած Հարգացական Ծառայութեան Բաժանմունքի կողմէ Յուլիս 3, 2017

Լէնթրմէնի Բիճընը Կեդրոնը կրնայ անկախ ապրելու հմտութեան (ԱԱՀ) (Independent Living Skills ILS) ծառայութիւններ հայթայթել չափահաս անհատի մը որ անհատին կը հայթայթէ գործառական հմտութեան ուսուցում թոյլատրելու որ ան ստանայ կամ պահէ հմտութիւններ ապրելու անկախաբար իր անձնական տան մէջ, կամ ձեռք ձգէ աւելի մեծ անկախութիւն մինչեւ այն ատեն որ կ'ապրի ծնողքին տան մէջ, ընտանիքի անդամի, կամ ուրիշ անձի մը հետ:

ԱԱՀի ծառայութիւնները կը կեդրոնանան հետեւեալ հիմքերու վրայ:

- Հիմնել անկախ եւ ապահով տնային մթնոլորտ, ներառեալ տան եւ փոխադրութեան օգնութեան ընտրութիւն:
- Կատարել կարելոր անձնական կարիքներ՝ տան խնամք, ճաշ պատրաստել, պիտճէ պատրաստել:
- Գիտակցութիւն բերել գաղութի կեանքի մէջ՝ շարժանակութեան, ապահովութեան եւ գաղութի աղբիւրներու:

Անհատներ որոնք անկախ ապրելու հմտութեան վարժեցում եւ հոգատարութիւններ կը խնդրեն նախ պէտք է ամբողջացնեն գնարկութիւն մը եւ պէտք է հետեւեալ չափանիշը ունենան՝

1. Պէտք է նուազագոյնը 18 տարեկան ըլլան եւ ալ չի մասնակցին յայտագիրներու որոնք վճատուած են հանրային դպրոցներու կողմէ:

2. Պէտք է յօժարութիւն արտայայտեն մասնակցելու բոլոր անկախ ապրելու հմտութեան վարժեցումի յայտագիրներուն եւ ապացուցանեն կարողութիւնը սորվելու եւ կատարելու պէտք եղած ձիւքերը:

3. Ունենան ստուգուած արդիւնքներ իրենց Անձնական Կեդրոնացած Ծրագրի (IPP) մէջ որ կապ ունի անկախ ապրելու հետ:

Ծառայութեան տեսակը եւ հոգատարութիւնը եւ ժամերը որոշուած են անհատին վարժեցումի նպատակներէն ստուգուած գնարկման եւ անհատին բնական օգնութեան կերպէն:

1. Սովորական հասցիներ կապուած Անհատական Անձնական Ծրագիրին կրնան յաջողիլ ամիսը 12էն 20 ժամերու վարժութենէ, ոչ աւելի քան 24 ամիսներու տեսողութեան:

2. Ծառայութիւնները եւ հոգատարութիւնները պէտք է վերաբննուին ամէն 6 ամիս: Կ'ակնկալուի որ ԱԱՀ հայթայթողը պահէ յատուկ փաստագրութիւն անհատի նպատակներու եւ նպատակակէտերու յառաջացումին մասին եւ թիճընը կեդրոնին հայթայթէ կիսամիայ տեղեկագրութիւններ՝ վստահեցնելու համար թէ ծառայութիւնները կը կատարուին ինչպէս վաւերացուած են: Տեղեկագրութիւնը պէտք է ընդգրկէ գործածուած նպատակէտերն ու ռազմավարութիւնները եւ պէտք է ուղղէ ստուգուած խոչընդոտները: Ծառայութիւններու շարունակութիւնը կը մնայ անհատին արդիւնքներու յառաջացումին ստուգման հիման վրայ:

3. Կիսամեայ վերաբննութեան ժամանակ, ծրագրումի խումբի ժողով մը պէտք է գումարուի որոշելու համար եթէ անհատը իր ծառայութեան ծրագրի մէջ արձանագրուած ձիւքերուն տիրացած է: Եթէ անհատը նշանակուած նպատակէտերը չէ յաջողած կամ բաւարար յառաջացում չէ ունեցած, ուրիշ ծառայութիւններ կամ ծրագիրներ պիտի փնտրուին անհատին համար:

Հակառակ պարագաներուն եթէ անհատ մը ցոյց տուած է անկարողութիւն ստանալու, պահելու կամ պէտք ունեցած ձիւքերը հաստատելու, բայց պէտք ունի յառաջացումի հոգատարութեան, թիճընը կեդրոնը կրնայ, բոլոր հասարակ աղբիւրները հետապնդելէ ետք՝ (IHSS) վաւերացնէ Անձնական Հոգատարութեան ծառայութիւններ: Ծառայութիւնները կրնան ունենալ օգնութիւններ գործունէութիւններու հետ որոնք կարելոր են անհատի մը առողջապահութեան եւ երջանկութեան կամ օգնութիւն անձի մը անձնական զբաղումի ինչպէս՝ անձնական դրամական նախահաշիւներուն: